

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ՎՍԵՄ.

ԼՈՒԻՃԻ ԼՈՒՑՍԱԴԴԻԻ ՇԵՏ

.. > < ..

Մեծ հայաստեղին Բատուա ժամանումը երջա-
նիկ արիթմը տուաւ հայ ուսանողական Միութեան,
անգամ մը ևս յայտնել իր հրախտագիտութիւնը
անոր՝ որ քաղաքակիրթ աշխարհին առջև մեր
ղջակատուր ազգին նշարտու պաշտպաններէն
մին եղաւ: Մեծն կլտատունի մտերիմ բարեկամը
անոր մահէն վերջն ալ չի դադրեցաւ իր կորովի
ձայնը բարձրացնել այն ամէն անգամ, երբ հայ
ազգը ճգնաժամային վայրկեաններ կ'անցնէր:

1895-6ի ջարդերու առնն դարձեալ ինքն էր
որ իր կտաւաժարական բարձր դիրքէն անվհատ-
օրէն արդարութիւն կը պնդար ի տես հազարաւոր
անմիղ նահատակներու զոհաբերութեան:

Դա սկսած էր սիրել հայը իր մանկութեան
մտաւղ տարիքէն սկսեալ, և ինչպէս արդէն ինքն
իսկ զայս հաստատեց մեզ բնելով թէ.

«Գեռ փոքր էի երբ կ'այցելէի վ ինտելիկ Միւի-
« թարեան վանքը, այն ժամանակնի սիրեցի հայը
« և ճաննցայ որ նա քաղաքակիրթութեան միակ
« ազգակն է Արեւելքի մէջ »:

Որքան մեծ եղաւ մեր հրճունքը երբ աւելոր
պատկանեի ժերուսին մեզ հայրաքաղ ընդունեց
իւր գրասենեակը « Դա » վսեմ. լուցադրդի, մեծ
հայրենիքի մեծ գաւազն, միշտ էր այդ տարի-
քը, դեռ չ'ուզեր դադարեցնել իր անխոնջ աշ-
խատանքը հայրենիքի նուիրական բարեփոխ հա-
մար:

Երբ Խալիլոյ Հայ Ուսանողական Միութեան
ատենապետը՝ ամբողջ ուսանողութեան անուամբ
իր խորին երախտիքը կը յայտնէր, մեծ հայա-
սէրը խանդավառ ու եռանդոտ երիտասարդի
մը, կամ աւելի ճիշդ գուրգուրալից հօր մը
սրտապնդիչ ձայնով կը պատասխանէր, —
« Այն քան տարիներէ ի վեր ես իմ մէկ
« ջանքս խնայեցի այն ազգին՝ որուն անհամար
« ցաւերուն ու արդարացի տնչանքներուն մօտէն
« տեղեկ էի, այո, զայն ճաննցած և սիրած եմ
« իր հերոսութեան և իր անուրիթեանը մէջ:
« Ժամանակին ստէպ խրատած էի թուրք կտաւ-
« վարութիւնը, որ հայերու հանգէպ բարենորո-
« գիչ քաղաքակրթութիւն մը բունէ, և երբ երի-
« տասարդ թուրքերը տապալելով Ալատիւ Հա-
« մատեան ուժիմը կտաւաժարութեան դեկը իրենց
« ձեռքը կ'առնէին, Ամէտ Բիգապ պէյին՝ սոյն
« կէտը, իբր նախարարապետ, պատշտապէս
« ուշադրութեան առնել կու տայի. բայց աւաղ
« որ անոնք չի կրցան ըմբռնել այն համերաշ-
« խութեան և մարդասիրութեան մեծ գաղա-
« վարը, որոնց անտեսելը այսօր զիրենք առեկի
« կ'ընէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին: Աւ-
« րախ եմ այսօր որ կտաւաժ եմ իմ մարդա-

« սիրական պարտականութիւնս: Առէ՛ք ոչ շատ
« առաջ աշխատեցայ առաջին առնել ազգու մի-
« ջոցներով ջարդի մը՝ որը կը կազմուէր կողմ-
« կասի մէջ: Հայ ազգը գիտցաւ գնահատել իմ
« այս ջանքերս և վերջերս ինձ կը ծանուցանէին
« որ կը փափաքին արձանս կանգնել յերդումի
« (կարինի) հրապարակներէն մէկուն մէջ սա
« արձանագրութեամբ »:

«Colui che la difese a viso aperto»

(Dante Inf. X)

Հոս նորին վսեմութիւնը արտաբերելէ յետոյ
հայկական դատի վերաբերեալ շատ մը եղելու-
թիւններ, որ այսօր ամէն հայ գիտէ ու կը ճանն-
նայ, այսպէս պատասխանեց մեր սա հարցումին
« Թէ ինչ է իր կարծիքը հայկական դատի
նկատմամբ և թէ կարող էնք յուսալ թէ այն
պիտի լուծուի մեր փափաքներուն համեմատ »:

« Եթէ ամէնքը ինձ նման մտածէին և ունենէին
« բուն իրականութիւնը, այսօր արդէն հայկա-
« կան խնդիրը իր վերջնական լուծումը կը ստա-
« նար, բայց կան շատ մը բարդութիւններ, որոնց
« յաղթելը բաւական գոտարին է, սակայն ինչ
« որ ալ ըլլայ կը յուսամ որ՝ նպատատաւոր լու-
« ծում մը անպատճառ տեղի կ'ունենայ »:

Վսեմ. լուցադրդի նմանապէս մեծ ուրախու-
թեամբ մեզ հաղորդեց, մեր հայ հանրապետու-
թեան իրեն ուղարկած մէկ հեռագիրը որուն
միջոցաւ Պր. Ա. Խատիսեան ժողովուրդի և
կառավարութեան անունով խորին նորակալու-
թիւն կը յայտնէր Մեծ հայաստին և կը խնդրէր
որ իր զօրեղ և մարդասիրական ձայնը միշտ
լսելի ընէ ի շահ հայկական դատին: Անգամ մը
ևս Խալիլոյ Հայկին Հախարարապետը մեզ
հաւատարմ թէ՛ ինք երբեք պիտի չի պակսի իր
այս պարտականութեանը մէջ: Դա մեծ յոյս
ունի հայ ազգին ապագայի մասին, « Հայը նման
« է Հրեայ ազգին որ միշտ հաւածուած է, և որ
« իր զոհաբերութեանը մէջ անոր եղբայրացած.
« գիտցած է, այս երկու ազգերն ալ, դարեւոր
« կենաքի մը ելեւջնիրուն՝ իրենց ինքնուրուշու-
« թիւնը ապահովել »:

Ի վերջոյ Հորին վսեմութիւնը զովելով Խալ-
իլոյ Հայ ուսանողութեան ջանքերը, մասնաւոր-
ապէս հետաքրքրուեցաւ անոնց կենանքով և
իմանալով որ անոնցմէ շատեր իրենց ծնողքը
հայրենիքի մէջ կորստած և այժմ ոչ մէկ լուր
ունին, փափաքեցաւ որ իրեն տրուի ուսանողաց
ընտանիքներուն անունները, որպէս զի խաղաղ
կառավարութեան ձեռքով գանձը փնտռել տայ:

Երախտագիտութեան զգացմունքներով հրա-
ժեշտ առնիք անկէ՝ որ ներկայիս հայկական
դատին ամենաաջատու ախոյեանն է մեր Եւրո-
պայի բարեկամներուն մէջ:

Խալիլոյ Հ. Ուս. Միտրեան

անգամ Պ. ՊԱՊԻԿԵԱՆ